ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ԱՆԵԾՔ, ԹԵ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇԱՐԺԻՉ ՈՒԺ. ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

DOI: 10.52174/2579-2989_2023.4-71

Հիմնաբառեր. «ռեսուրսային անեծք», «նավթային անեծք», արդյունաբերություն, Ադրբեջան



Շուշան ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի փորձագետ

2014 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա: 2016 թ. աշխատանքի է անցել ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում՝ սկզբում որպես կրտսեր հետազոտող, իսկ 2018 թ.-ից առ այսօր՝ որպես փորձագետ: Հեղինակ և համահեղինակ է 9 գիտական աշխատանքների:

https://orcid.org/0000-0001-7669-8626

Ածխաջրածնային ռեսուրսների առատությունը լուրջ խնդիրներ է ստեղծում զարգացող, բայց ոչ զարգացած երկրների համար: Նավթի պաշարներով հարուստ բազմաթիվ զարգացող երկրներ տնտեսական, սոցիալական և քաղաքական բնույթի ավելի շատ խոչընդոտների են բախվում, քան նման բնական ռեսուրս չունեցողները: Այս երևույթը ստացել է «ռեսուրսային անեծք» անվանումը:

Զարգացող երկներից շատերի նման «ռեսուրսային անեծք» երևույթի բացասական ախտանշանները այս կամ այն չափով առկա են Ադրբեջանի տնտեսության մեջ: 1990-ական թվականների երկրորդ կեսից սկսած՝ Ադրբեջանի նավթային տնտեսություն են ներհոսել հսկայածավալ ներդրումներ, որոնք էլ կանխորոշել են արդյունաբերության անառողջ կառուցվածքը:

Ածխաջրածնային ռեսուրսների առկայությունն արդյո՞ք դրական, թե բացասական գործոն է տնտեսության համար: Այս հարցի պատասխանն աներկբա չէ: Թեև ռեսուրսներով հարուստ լինելն առաջին հայացքից դրական երևույթ է, սակայն որոշ երկրներում դա չի նպաստում տնտեսական զարգացման բարձր մակարդակի ապահովմանը[1]:

Տնտեսական աճի վրա բնական հարստությունների բացասական ազդեցությունը ստացել է «ռեսուրսային անեծք» անվանումը: Այս հասկացությունն առաջին անգամ կիրառել է Ռիչարդ Օտին՝ 1993 թ.՝ բնութագրե-

[1] Ресурсное проклятие: можно ли его избежать, 16.02.2022, https://guru.nes.ru/ekonomicheskij-slovar/resursnoe-proklyatie-mozhno-li-ego-izbezhat.html

լու համար բնական հարստությունների բացասական ազդեցությունը երկրի տնտեսական, սոցիալական և քաղաքական համակարգերի վրա: Տեսականորեն՝ հասկացությունը վերաբերում է բոլոր օգտակար հանածոներին, սակայն ավելի շատ բացատրում է ածխաջրածնային ռեսուրսներով հարուստ երկրների խնդիրները, քանի որ ածխաջրածնային ռեսուրսների առևտուրը բնական ռեսուրսների առևտրի մոտ 90 %-ն է: Հետևապես՝ «ռեսուրսային անեծքն» առաջին հերթին «նավթային անեծք» է[2]: «Ռեսուրսային անեծքը» չի վերաբերում վերականգնվող ռեսուրսներին[3]: Ընդ որում, այս երևույթը շրջանցում է ածխաջրածնային ռեսուրսներով հարուստ զարգացած երկրները: «Նավթային անեծքից» խուսափել են այնպիսի զարգացած երկրներ, ինչպիսիք են Նորվեգիան, Կանադան, Մեծ Բրիտանիան, որոնց տնտեսությունները չափազանց բազմազանեցված են և նվազագույն կախվածություն ունեն օգտակար հանածոների արդյունահանումից: Այսպիսով՝ «ռեսուրսների անեծք» հասկացությունն օգտագործում են՝ բնութագրելու օգտակար հանածոներով, իսկ ավելի ստույգ՝ ածխաջրածնային ռեսուրսներով հարուստ զարգացող երկրները, որոնք թեև տիրապետում են հսկայածավալ բնական ռեսուրսների, սակայն չեն կարողացել հասնել տնտեսական ու քաղաքական զարգացման:

Ռեսուրսների բացասական ազդեցությունը դրսևորվում է տեխնոլոգիական, ինստիտուցիոնալ, քաղաքական և մակրոտնտեսական կառուցակարգերի միջոցով[4]: Քանի որ ածխաջրածնային ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը ավելի բարձր է զարգացած երկրներում, քան զարգացող երկրերում, ապա վերջիններս գնում են հումքային մասնագիտացման ուղիով: Դա չի նպաստում գիտելիքի կուտակմանն ու մարդկային կապիտալում ներդրումներին: Բացի այդ, նավթի վաճառքից ստացվող արտարժութային հոսքերը կարող են հանգեցնել «հոլանդական հիվանդության», այն է՝ ազգային արժույթի արժևորմանը, որն էլ, իր հերթին, բերում է տնտեսության մյուս ճյուղերի մրցունակության անկման:

Շուկայի ձախողումներն ուղղելու համար անհրաժեշտ են պետական միջամտություն ու բավական ամուր ինստիտուտներ: Որպես կանոն, «ռեսուրսային անեծքը» գերիշխում է թույլ ինստիտուտներ ունեցող երկրներում[5]: Ավելին, ռեսուրսների առատությունը կարող է նվազեցնել ինստիտուտների ամրապնդման խթանները: Նավթի արտահանումից ստացվող եկամուտները վերնախավի ձեռքերում են, իսկ վերջիններս շահագրգռված չեն ներդրում կատարել իրենց իշխանությունը սահմանափակող կառուցակարգերի զարգացման մեջ:

Հումքային մասնագիտացումը բերում է նաև ոչ հումքային արտադրությունների կրճատման, հումքի համաշխարհային գների տատանումներից տնտեսության կախվածության:

Ադրբեջանի արդյունաբերությունը

1990-ական թվականների երկրորդ կեսին Ադրբեջանի կառավարությունը միջոցներ ձեռնարկեց տնտեսությունը ճգնաժամից հանելու համար, որտեղ գլխավոր դերը պատկանում էր նավթի գործոնին: Խորհրդային տարիներին ԽՍՀՄ-ն իր արդյունահանման կարողությունները հիմնականում կենտրոնացրել էր Սիբիրում և բավարար ենթակառուցվածքներ չէր ստեղծվել կասպյան շրջանում[6]: Անկախության ձեռքբերումից հետո Ադրբեջանը ստիպված եղավ արդյունահանման կազմակերպման համար օտարերկրյա ներդրումներ և տեխնոլոգիաներ ներմուծել

[2] Росс, М., Нефтяное проклятие: Как богатые запасы углеводородного сырья задают направление развития государств/ пер. с англ. Ю. Каптуревского; под ред. Т. Дробышевской. М. : Изд-во Института Гайдара, 2015. 464 с.

[3] Ховавко Ирина Юрьевна, & Шведов Кирилл Иванович (2017). «Ресурсное проклятие»: обзор точек зрения. Государственное управление. Электронный вестник, (64), 56-67. doi: 10.24411/2070-1381-2017-00074

[4] Что такое "ресурсное проклятье" и причем здесь Азербайджан, https://antitopor.com/articles/chto-takoe-resursnoe-proklyate-i-prichem-zdes-azerbajdzhan.html

[5] Ресурсное проклятие: можно ли его избежать, 16.02.2022, https://guru.nes.ru/ekonomicheskij-slovar/resursnoe-proklyatie-mozhno-li-ego-izbezhat.html

[6] Ермолаев С.А. (2017). Нефтегазовая зависимость советского Союза: уроки для современной России. Всероссийский экономический журнал ЭКО, (5 (515)), 76-97.



	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
նավթային հատված	6730.7	6622.7	5617.4	4900.8	3142.0	3345.2	3922.1	4004.9
ոչ նավթային հատված	1318.5	860.4	1706.2	813.0	967.1	930.1	605.6	790.4
ՕՈՒՆ	8049.2	7483.1	7323.6	5713.8	4109.1	4275.3	4527.7	4795.3

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Ադրբեջանի ՕՈՒՆ-ի պաշարների շարժընթացը 2014-2021 թթ. (մլն ԱՄՆ դոլար)[7]

դրսից, քանի որ թե՛ մասնավոր, թե՛ պետական հատվածում բավարար չափով կապիտալ և տեխնոլոգիաներ առկա չէին: Նավթագազային ճյուղի զարգացումն ապահովեց օտարերկրյա ներդրումների ներհոսք, արտահանումից ստացվող եկամուտների և բյուջետային եկամուտների նշանակալի աճ, որոշ չափով նաև հիմք դարձավ տնտեսության մյուս ճյուղերի զարգացման համար (գծապատկեր 1):

Գծապատկեր 1-ում ներկայացված է Ադրբեջանի ՕՈՒՆ-ի պաշարների շարժընթացը 2014-2021 թթ.: 2021 թ. օտարերկրյա ուղղակի ներդրումները կազմել են 4,8 մլրդ ԱՄՆ դոլար, որի 83,5%-ը ներդրվել է նավթային և միայն 16,5%-ը՝ ոչ նավթային հատվածում: 2014-2018 թթ. նավթային հատվածում ներդրումների ծավալը կտրուկ կերպով անկում է ապրել, իսկ հաջորդող տարիներին աստիճանաբար աճել է, սակայն դեռևս չի հասել 2015 թվականի մակարդակին: Ինչ վերաբերում է ոչ նավթային ոլորտին, ապա այստեղ կատարվող ներդրումները կայուն չեն: 2016 թ. ոչ նավթային հատվածում ՕՈՒՆ-ը հասել է 1,7 մլրդ ԱՄՆ դոլարի, այնուհետև կտրուկ կերպով անկում է ապրել: Թեև առանձին տարիներին որոշակի աճ է նկատվել, սակայն ոչ նավթային ոլորտում ՕՈՒՆ-ները չեն գերազանցել 1 մլրդ ԱՄՆ դոլարը: Այսպիսով՝ նավթագազային ոլորտում ներգրավված օտարերկրյա ներդրումներն Ադրբեջանի տնտեսության ժամանակակից կառուցվածքի հիմքն են:

Ադրբեջանի տնտեսության մեջ ինքնին բարձր է արդյունաբերության տեսակարար կշիռը: 2021 թ. ՀՆԱ-ում արդյունաբերության ոլորտի տեսակարար կշիռը կազմել է 42%: Այս ցուցանիշով Ադրբեջանը գերազանցում է նույնիսկ միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների խմբին:

2021 թ. արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է 55.2 մլրդ մանաթ, որը 1996 թ. ցուցանիշը գերազանցում է 23,1 անգամ: Սկսած 2004 թվականից՝ արդյունաբերական արտադրանքի ծավալը շեշտակիորեն ավելացել է: Թեև որոշակի ճգնաժամային տարիների նշանակալի անկումներին (օրինակ՝ 2009 թ.՝ -24,2%, 2015 թ.՝ -17,9%, 2020 թ.՝ -20,7%), 2004-2021 թթ. արդյունաբերական թողարկման աճի միջին տեմպը կազմել է 17,2%:

Վերջին տարիներին իրականացվում է տնտեսության բազմազանեցման քաղաքականություն, ինչի արդյունքում որոշակիորեն նվազել է արդյունահանող արդյունաբերության մասնաբաժինն արդյունաբերության կառուցվածքում: Ինչպես երևում

[7] Աղբյուրը՝ Ադրբեջանի ազգային վիճակագրական կոմիտե, https://www.stat.gov.az/source/system_nat_accounts/?lang=en



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Ադրբեջանի արդյունաբերական արտադրանքի ծավալը, փաստացի գներ (մլն մանաթ)[8]



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Ադրբեջանի արդյունաբերության կառուցվածքը, 2011 և 2021 թվականներ[9]

է գծապատկեր 3-ում, 2021 թ. արդյունահանող արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է 36,2 մլրդ մանաթ կամ արդյունաբերական արտադրանքի 65.6%-ը: Մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալը կազմել է 15,9 մլրդ մանաթ կամ արդյունաբերական արտադրանքի 28,8%-ը: Համեմատության համար նշենք, որ 2011 թ. արդյունահանող արդյունաբերության մասնաբաժինը եղել է 76,8%, իսկ մշակողինը՝ 18,2%: Հետևապես, չնայած նավթագազային ոլորտի դերի նվազման որոշակի միտումներին, արդյունաբերության ոչ արդյունավետ համամասնությունը պահպանվում է, իսկ տնտեսությունը գտնվում է նավթային ոլորտից նշանակալի կախվածության մեջ:

Մշակող արդյունաբերության կառուցվածքն աչքի է ընկնում ցածր ավելացված արժեք ունեցող ճյուղերի գերակշռմամբ: Մասնավորապես՝ 2021 թ. մշակող արդյունաբերության կեսից ավելին (54,8%) բա-

[8] Աղբյուրը՝ Ադրբեջանի ազգային վիճակագրական կոմիտե, https://www.stat.gov.az/source/system_nat_accounts/?lang=en
[9] Նույն տեղում:

ժին է ընկել սննդամթերքի և խմիչքների արտադրությանն ու նավթի վերամշակումից ստացվող արտադրանքին: Սա այն դեպքում, երբ տեխնոլոգիատար ճյուղերի՝ մեքենա և սարքավորումների, տրանսպորտային սարքավորումների մասնաբաժինը չի գերազանցում 5%-ը: Դրա հետ մեկտեղ, պետք է նշել, որ 2011 թ. համեմատ նվազել է նավթի վերամշակումից ստացվող արտադրանքի տեսակարար կշիռը, փոխարենը՝ նշանակալիորեն ավելացել քիմիական արդյունաբերության արտադրանքինը: Բացասական միտում է մեքենա և սարքավորումների ճյուղի տեսակարար կշռի՝ 2011 թ. 6,3%-ից 2021 թ. մինչև 3,9% նվազումը:

Ադրբեջանի ՀՆԱ-ում մշակող արդյունաբերության մասնաբաժինը 6,1% է, ինչը փոքր ցուցանիշ է անգամ ցածր եկամուտ ունեցող երկրների համեմատ: Մինչդեռ այս ճյուղի զարգացումը տնտեսության մրցունակության կարևորագույն բաղադրիչն է, քանի որ այն ապահովում է արտադրողականության, նորարարությունների և արտաքին առևտրի աճ: Բավական է նշել, որ աշխարհում մասնավոր հետազոտությունների և մշակումների 90%-ը բաժին է ընկնում այս ոլորտին[10]:

Ադրբեջանի տնտեսության զարգացման նոր մոդելի ձևավորման նպատակով 2014 թ. ընդունվել է արդյունաբերության զարգացման 2015-2020 թթ. պետական ծրագիրը[11], որի համաձայն՝ արդյունաբերության մրցունակության բարձրացման հասնելու միջոցառումներն իրականացվել են հետևյալ ուղղություններով՝ արդյունաբերական ձեռնարկություններին աջակցություն, արդյունաբերական պարկերի և գոտիների ստեղծում, կադրային ներուժի և գիտական ապահովման ամրապնդում և օրենսդրության կատարելագործում: 2016 թ. ընդունվել է նաև Ադրբեջանի նախագահի հրամանագիրն ազգային տնտեսության և տնտեսության հիմնական ոլորտների ռազմավարական ճանապարհային քարտեզների մասին[12]: Վերջիններս ներառում են տնտեսական զարգացման և մի շարք այլ միջոցառումներ 2016-2020 թթ. ժամանակահատվածի համար և մինչև 2025 թ. կանխատեսումներ: Նախատեսվում են մեքենաշինական հատվածի արտադրողականության մակարդակի բարձրացում՝ շնորհիվ նոր տեխնոլոգիաների օգտագործման և ծանր արդյունաբերության կառուցվածքի արդիականացման, ինչպես նաև մի շարք միջո-

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Ադրբեջանի մշակող արդյունաբերության կառուցվածքը[13]

	2011 թ.		2021 թ.	
	Ծավալը, մլն մանաթ	Մասնաբաժինը մշակող արդյուն. մեջ	Ծավալը, մլն մանաթ	Մասնաբաժինը մշակող արդյուն. մեջ
Սննդամթերք և խմիչքներ	2276.6	35.6%	4986.5	31.4%
Նավթի վերամշակումից ստացվող արտադրանք	2483.8	38.9%	3721.8	23.4%
Քիմիական արդյունաբերություն, ոչ մետաղական հանքային արտադրանք	550.5	8.6%	2984.8	18.8%
Մետաղական արտադրանք	300.7	4.7%	1228.4	7.7%
Ծխախոտ	22.8	0.4%	677.9	4.3%
Մեքենա և սարքավորումներ	400.8	6.3%	622.1	3.9%
Տեքստիլ և հագուստ	90.8	1.4%	499.5	3.1%
Տրանսպորտային սարքավորումներ	14.1	0.2%	92.2	0.6%
Այլ արտադրանք	252.3	3.9%	1073.8	6.8%

[10] Владимир Кондратьев, Глобальная обрабатывающая промышленность, 11/06/2013, https://www.perspektivy.info/book/globalnaja_obrabatyvajushhaja_promyshlennost_2013-06-11.htm

[11] Государственная программа по развитию промышленности в Азербайджанской Республике на 2015-2020 годы https://azertag.az/ru/xeber/GOSUDARSTVENNAYA_PROGRAMMA_po_razvitiyu_promyshlennosti_v_Azerbaidzhanskoi_Respublike_na_2015_2020_gody-823447

[12] Указ Президента Азербайджанской Республики об утверждении стратегических дорожных карт по национальной экономике и основным секторам экономики, 06 декабря 2016, https://president.az/ru/articles/view/21953

[13] Աղբյուրը՝ Ադրբեջանի ազգային վիճակագրական կոմիտե, https://www.stat.gov.az/source/system_nat_accounts/?lang=en



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

Ադրբեջանի արդյունաբերության մրցունակության համաթվի շարժընթացը[14]

ցառումներ՝ ուղղված արդյունաբերական ձեռնարկությունների վերակառուցմանը: Առաջնահերթություն է համարվում ոչ նավթային ոլորտի դինամիկ զարգացումը, որտեղ կարևոր դեր է խաղալու մասնավոր ձեռնարկատիրությունը, մասնավորապես՝ պետությունն աջակցելու է ՓՄՁ-ին[15]:

Հասկանալու համար, թե որքանով են այս միջոցառումներն արդյունավետ, դիտարկենք Ադրբեջանի արդյունաբերության մրցունակության շարժընթացը: Ադրբեջանի արդյունաբերության միջազգային մրցունակության գնահատման համար դիտարկել ենք ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության մշակած արդյունաբերության մրցունակության համաթիվը (Competititve Industrial Performance Index (CIP), որը համալիր ցուցանիշ է և գնահատում է ոլորտի մրցունակությունն ըստ երեք հիմնական հարթության՝ մշակող արդյունաբերական արտադրանք թողարկելու ու արտահանելու կարողություն, տեխնոլոգիական խորություն ու արդիականացում, համաշխարհային արդյունաբերական արտադրանքի վրա ունեցած ազդեցություն[15]: Համաթիվը թույլ է տալիս հասկանալ, թե որոնք են արդյունաբերական զարգացման հիմնական շարժիչ ուժերն ու խոչընդոտները:

2023 թ. վարկանշում Ադրբեջանը զբաղեցրել է 106-րդ հորիզոնականը՝ 153 երկրի շարքում: Ադրբեջանի համաթվի շարժընթացը ցույց է տալիս, որ վերջին տասնամյակում գրանցվել է արդյունաբերության մրցունակության անկում, ինչից կարելի է եզրակացնել, որ արդյունաբերության կառուցվածքի բարելավմանն ուղղված միջոցառումներն արդյունավետ չեն եղել (գծապատկեր 4):

Մրցունակության համաթվի ցածր ցուցանիշները վկայում են Ադրբեջանի տնտեսության տեխնոլոգիական հետամնացության մասին: Այսպես՝ 2021 թ. մշակող արդյունաբերական արտադրանքի ծավալը մեկ շնչի հաշվով կազմել է 385 ԱՄՆ դոլար, այն դեպքում, երբ Վրաստանում այս ցուցանիշը 398 ԱՄՆ դոլար էր, իսկ Հայաստանում՝ 528 ԱՄՆ դոլար: Ադրբեջանը 1990 թ. մակարդակին կարողացել է հասնել միայն 2021 թ.[17]:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ Ադրբեջանի տնտեսության մեջ այս կամ այն չափով առկա են «ռեսուրսային անեծք» երևույթի բացասական ախտանշանները: Ադրբեջանի արդյունաբերությունն աչքի է ընկնում ոչ նավթային ճյուղերի ցածր, անհամաչափ զարգացմամբ: Թեև 1990-ական թթ. նավթային ոլորտում ներդրումնե-

[14] ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (United Nations Industrial Development Organization) տվյալների բազա, https://stat.unido.org/cip/

[15] Гамидова Лала, Особенности промышленной политики Азербайджана, Development prospects of market economy, 2020, https://audit-journal.az/files/articles/80.pdf

[16] Խաչատրյան Ա., ՀՀ արդյունաբերության ոլորտի «գորշ գույները», 2023, «Ամբերդ» տեղեկագիր, 2023(2), https://asue.am/upload/files/amberd/2023-year-2/6.pdf

[17] Նույն տեղում:

րի ներգրավմամբ հնարավոր եղավ ապահովել տնտեսության վերականգնում, բյուջետային մուտքեր և զարգացնել հարակից ոլորտները, այնուամենայնիվ, տնտեսությունը կախվածության մեջ է ընկել նավթագազային ոլորտից՝ կրելով «նավթային անեծքի» բոլոր բացասական հետևանքները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ադրբեջանի ազգային վիճակագրական կոմիտե, https://www.stat.gov.az/source/system_nat_accounts/?lang=en
2. Խաչատրյան Ա., ՀՀ արդյունաբերության ոլորտի «գորշ գոյները», 2023, «Ամբերդ» տեղեկագիր, 2023(2), https://asue.am/upload/files/amberd/2023-year-2/6.pdf
3. ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (United Nations Industrial Development Organization) տվյալների բազա, https://stat.unido.org/cip/
4. Государственная программа по развитию промышленности в Азербайджанской Республике на 2015-2020 годы https://azertag.az/ru/xeber/GOSUDARSTVENNAYA_PROGRAMMA_po_razvitiyu_promyshlennosti_v_Azerbaidzhanskoi_Respublike_na_2015_2020_gody-823447
5. Владимир Кондратьев, Глобальная обрабатывающая промышленность, 11/06/2013, https://www.perspektivy.info/book/globalnaja_obrabatyvajushhaja_promyshlennost_2013-06-11.htm
6. Гамидова Лала, Особенности промышленной политики Азербайджана, Development prospects of market economy, 2020, https://audit-journal.az/files/articles/80.pdf
7. Ермолаев С.А. (2017). Нефтегазовая зависимость советского Союза: уроки для современной России. Всероссийский экономический журнал ЭКО, (5 (515)), 76-97.
8. Ресурсное проклятие: можно ли его избежать, 16.02.2022, https://guru.nes.ru/ekonomicheskij-slovar/resursnoe-proklyatie-mozhno-li-ego-izbezhat.html
9. Указ Президента Азербайджанской Республики об утверждении стратегических дорожных карт по национальной экономике и основным секторам экономики, 06 декабря 2016, https://president.az/ru/articles/view/21953
10. Что такое "ресурсное проклятье" и причем здесь Азербайджан, https://antitopor.com/articles/chto-takoe-resursnoe-proklyate-i-prichem-zdes-azerbajdzhan.html
11. Ховавко Ирина Юрьевна, & Шведов Кирилл Иванович (2017). «Ресурсное проклятие»: обзор точек зрения. Государственное управление. Электронный вестник, (64), 56-67. doi: 10.24411/2070-1381-2017-00074

Шушан Мовсисян
Эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ

ГЕОЭКОНОМИЧЕСКАЯ ХРОНИКА

РЕСУРСНОЕ ПРОКЛЯТИЕ ИЛИ ДВИЖУЩАЯ СИЛА ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ? ПРОМЫШЛЕННОСТЬ АЗЕРБАЙДЖАНА

Обилие углеводородных ресурсов создает серьезные проблемы для развивающихся, но не для развитых стран. Многие богатые нефтью развивающиеся страны сталкиваются с более серьезными экономическими, социальными и политическими проблемами, чем страны, не имеющие нефтяных ресурсов. Этот феномен получил название “ресурсное проклятие”. Как и во многих богатых нефтью развивающихся странах, негативные симптомы феномена “ресурсного проклятия” в той или иной степени присутствуют в экономике Азербайджана. Во второй половине 1990-х годов в нефтяную сферу экономики Азербайджана были вложены огромные инвестиции, что предопределило нездоровую структуру промышленности.

Ключевые слова: *ресурсное проклятие, нефтяное проклятие, промышленность, Азербайджан*

Shushan MOVSISYAN
Expert at «Amberd» Research Center, ASUE

GEOECONOMIC CHRONICLE

RESOURCE CURSE OR DRIVING FORCE TO ECONOMIC DEVELOPMENT: THE INDUSTRY OF AZERBAIJAN

The abundance of hydrocarbon resources creates serious problems for developing, but not developed countries. Many oil-rich developing countries face more economic, social and political challenges compared to those without natural resources, a phenomenon known as the “resource curse.” Azerbaijan, like many developing countries, has also experienced some negative consequences associated with the phenomenon of "resource curse”. In the second half of the 1990s, foreign direct investments flew into the oil economy of Azerbaijan, which predetermined the unhealthy structure of the industry.

Keywords: *resource curse, oil curse, industry, Azerbaijan*